ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«06» Դեկտեմբերի 2018 թ. N 33

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6 կետով.

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ-	Դեմ-	Ձեռնպահ-
Վ.Հակոբյան	----------/ստ./		
Ռ.Մովսիսյան	----------/ստ./		
Թ.Մոդոմոնյան	----------/ստ./		
Ի.Հակոբյան	----------/ստ./		
Գ.Համբարձումյան	----------/ստ./		
Վ. Վարդանյան	----------/ստ./		
Ն, Կյուրեղյան	----------/ստ./		
Ս, Սարգսյան	----------/ստ./		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Կ.Տ.

2018 թվականի
Դեկտեմբերի «06»
գ. Մրգաշատ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-ի N 9 ՆԻՍՏԻ
N 33 ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաշատ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 9 նիստի

1. Օրակարգի հաստատում:
2. Համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2019 թվականի դրույքաչափերի հաստատելու մասին:
3. Համայնքի մատուցած ծառայությունների դիմաց գանձվող վճարների 2019 թվականի դրույքաչափերը հաստատելու մասին:
4. 2019 թվականի Մրգաշատ համայնքի ղեկավարի և համայնքապետարանի աշխատակազմի, Մշակույթի տան, գրադարանների, մանկապարտեզի, երաժշտական դպրոցի և բուժ ամբուլատորիայի աշխատակիցների հաստիքացուցակներն և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
5. Մրգաշատ համայնքի 2019 թվականի բյուջեի հաստատման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«06» Դեկտեմբերի 2018թ. *N 34-Ն*

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 18-րդ ենթակետի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաշատ համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2019 թվականի դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ-	*Դեմ-*	*Ձեռնպահ-*
Վ.Հակոբյան	/ ստ./		
Ռ.Մովսիսյան	/ ստ./		
Թ.Սողոմոնյան	/ ստ./		
Ի.Հակոբյան	/ ստ./		
Գ.Համբարձումյան	/ ստ./		
Վ. Վարդանյան	/ ստ./		
Ն, Կյուրեղյան	/ ստ./		
Մ, Մարգսյան	/ ստ./		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ*

Կ.Տ.

2018 թվականի
Դեկտեմբերի «06»
գ. Մրգաշատ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-ի N 9 ՆԻՍՏԻ
N 34-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,
- 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,
- 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,
- 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված

դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

4. Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ մեկ հարյուր հազար դրամ.

5. Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երեսուն հազար դրամ.

6. Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ քսանհինգ հազար դրամ.

7. Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երկու հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար հինգ հարյուր դրամ,
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթ հազար դրամ,
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնմեկ հազար դրամ,
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար դրամ,
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երկու հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար հինգհարյուր դրամ,

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթ հազար դրամ,

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնմեկ հազար դրամ,

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար դրամ.

- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար դրամ.

8. համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ,

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ յոթը հազար դրամ,

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնմեկ հազար դրամ,

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասներեք հազար դրամ,

- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսանհինգ հազար հարյուր դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև հինգ հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մեկ հազար դրամ,

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ,

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար դրամ,

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասներկու հազար դրամ.

9. Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ,

դ. խաղատների համար՝ հինգ հարյուր հազար դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ հարյուր հազար դրամ.

10. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ յոթ հարյուր դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

11. Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

12. Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ հինգ հազար դրամ.

13. համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ.

14. համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երեք միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«06» Դեկտեմբերի 2018թ. N 35-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 19-րդ ենթակետի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաշատ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների 2019 թվականի դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կողմ- Դեմ- Չեռնպահ-

Վ.Հակոբյան ---------- /ստ./
Ռ.Մովսիսյան ---------- / ստ./
Թ.Սողոմոնյան ---------- / ստ./
Ի.Հակոբյան ---------- / ստ./
Գ.Համբարձումյան ---------- / ստ./
Վ. Վարդանյան ---------- /ստ./
Ն, Կյուրեղյան ---------- / ստ./
Մ, Մարգսյան ---------- / ստ./

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Կ.Տ.

2018 թվականի
Դեկտեմբերի «06»
գ. Մրգաշատ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-ի N 9 ՆԻՍՏԻ
N 35-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Երաժշտական դպրոց
   1) Նախադպրոցական դասարանի համար 2000/երկու հազար/դրամ
   2) 1-7-րդ դասարանների համար 3000/երեք հազար/դրամ
   3) 2-րդ գործիք, երգեցողություն ուսուցանելու դեպքում սահմանվում է լրացուցիչ վարձավճար 1500/մեկ հազար հինգ հարյուր/ դրամ
   4) Միևնույն ընատանիքից մեկից ավել երեխաների երաժշտական դպրոց հաճախելու դեպքում վերջիններիս համար 1500/մեկ հազար հինգ հարյուր / դրամ
2. Մանկապարտեզի ծնող գումարը մեկ ամսվա համար սահմանել 2000 /երկու հազար/ դրամ :
3. Համայնքի տարածքում աղբահանություն իրականացնելու համար 0 /զրո/ դրամ, իսկ իրավաբանական անձանց համար 1քմ-ի /մեկ քառակուսի մետրի/ համար 20/քսան / դրամ .
4. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեղնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար համայնքապետարրանի մատուցած ծառայությունների դիմաց սահմանել փոխհատուցման վճար 5000 /հինգ հազար/ դրամ:
5. Համայնքապետարանի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար համայնքապետարանի մատուցած ծառայությունների դիմաց սահմանել փոխհատուցման վճար 1000 /մեկ հազար/ դրամ;
6. Համայնքապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար 5000 /հինգ հազար/ դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«06» Դեկտեմբերի 2018 թ. N 36-Ն

2019 ԹՎԱԿԱՆԻ ՄՐԳԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ, ԳՐԱԴԱՐԱՆԻ, ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԵՎ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 11-րդ և 28-րդ ենթակետերով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաշատ համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի, Մշակույթի տան, գրադարանների, մանկապարտեզի, երաժշտական դպրոցի և բուժ ամբուլատորիայի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակներն ու պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 1-N 7 հավելվածները :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կողմ- Դեմ- Չեռնպահ-

Վ.Հակոբյան ---------- /ստ./
Ռ.Մովսիսյան ---------- /ստ./
Թ.Մոդոմոնյան ---------- /ստ./
Ի.Հակոբյան ---------- /ստ./
Գ.Համբարձումյան ---------- /ստ./
Վ. Վարդանյան ---------- /ստ./
Ն, Կյուրեղյան ---------- /ստ./
Ս, Մարգսյան ---------- /ստ./

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Կ.Տ.

2018 թվականի
Դեկտեմբերի «06»
գ. Մրգաշատ

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-ի N 9 ՆԻՍՏԻ
N 36-Ն ՈՐՈՇՄԱՆ

1. Մրգաշատ համայնքի ղեկավարի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը.

Աղյուսակ 1

ՀՀ	*Քանակ*	*Հաստիքի անվանումը*	*Դրույքը*	*Պաշտոնի դրույքաչափը*
1	*2*	*3*	*4*	*5*
1	1	Համայնքի ղեկավար	1	300000

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-ի N 9 ՆԻՍՏԻ
N 36-Ն ՈՐՈՇՄԱՆ

2. Մրգաշատի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը,հաստիքացուցակն և պաշտոնային դրույքաչափերը.
   1) Աշխատակիցների քանակը - 21
   2) Աշխատակազմի հաստիքացուցակ և պաշտոնային դրույքաչափեր՝

Աղյուսակ 2

ՀՀ	*Քանակ*	*Հաստիքի անվանումը*	*Դրույքը*	*Պաշտոնի դրույքաչափը*
1	*2*	*3*	*4*	*5*
1	1	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	230000
2	1	Համայնքի ղեկավարի խորհրդական	1	180000
		Աշխատակազմ		
1	1	Աշխատակազմի քարտուղար	1	228000
2	1	Գլխավոր մասնագետ	1	190000
3	6	Առաջատար մասնագետ	6	180000
		Ֆինանսական բաժին		
1	1	Բաժնի պետ	1	226000
2	2	Գլխավոր մասնագետ	2	190000
3	1	Առաջատար մասնագետ	1	180000
4	1	Առաջին կարգի մասնագետ	1	140000
		Տեխնիկական սպասարկման անձնակազմ		
1	1	Վարորդ	1	110000
2	1	Քարտուղարուհի	1	115000
3	1	Կատարածու	1	110000
4	1	Հավաքարար	1	100000
5	1	Գերեզմանոցի պահակ	1	100000
Ընդամենը՝			*21*	

ՀԱՎԵԼՎԱԾ 3
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-ի N 9 ՆԻՍՏԻ
N 36-Ն ՈՐՈՇՄԱՆ

1. Մրգաշատի մշակույթի տան աշխատակիցների քանակը,հաստիքացուցակն և պաշտոնային դրույքաչափերը.
   1) Աշխատակիցների քանակը - 8
   2) Աշխատակազմի հաստիքացուցակ և պաշտոնային դրույքաչափեր

Աղյուսակ 3

ՀՀ	*Քանակ*	*Հաստիքի անվանումը*	*Դրույքը*	*Պաշտոնի դրույքաչափը*
1	*2*	*3*	*4*	*5*
1	1	Տնօրեն	1	110000
2	1	Գեղ.մասի վարիչ	1	100000
3	1	Պարուսույց	1	85000
4	1	Նկարչության դասատու	1	77000
5	1	Ասեղնագործության դասատու	1	77000
6	1	Ըմբշամարտի մարզիչ	1	85000
7	1	Պահակ	1	77000
8	1	Հավաքարար	1	77000
Ընդամենը՝			*8*	

ՀԱՎԵԼՎԱԾ 4
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-ի N 9 ՆԻՍՏԻ
N 36-Ն ՈՐՈՇՄԱՆ

1. Մրգաշատի գրադարանների աշխատակիցների քանակը,հաստիքացուցակն և պաշտոնային դրույքաչափերը.
   1) Աշխատակիցների քանակը - 2
   2) Աշխատակազմի հաստիքացուցակ և պաշտոնային դրույքաչափեր՝

Աղյուսակ 4

ՀՀ	*Քանակ*	*Հաստիքի անվանումը*	*Դրույքը*	*Պաշտոնի դրույքաչափը*
1	*2*	*3*	*4*	*5*
1	1	Գրադարանի վարիչ	1	100000
2	1	Գրադարանի վարիչ	1	100000
Ընդամենը՝			*2*	

ՀԱՎԵԼՎԱԾ 5
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N 9 ՆԻՍՏԻ
N 36-Ն ՈՐՈՇՄԱՆ

1. Մրգաշատի մանկապարտեզի աշխատակիցների քանակը,հաստիքացուցակն և պաշտոնային դրույքաչափերը.
   1) Աշխատակիցների քանակը - 19
   2) Աշխատակազմի հաստիքացուցակ և պաշտոնային դրույքաչափեր՝

Աղյուսակ 5

ՀՀ	*Քանակ*	*Հաստիքի անվանումը*	*Դրույքը*	*Պաշտոնի դրույքաչափը*
1	*2*	*3*	*4*	*5*
1	1	Մանկապարտեզի տնօրեն	1	110000
2	1	Տնտեսվար	0.5	77000
3	1	Հաշվապահ	0.5	88000
4	6	Դաստիարակ	3.75	90000
5	3	Դաստիարակի օգնական	3	77000
6	1	Խոհարար	1	77000
7	1	Օտար լեզվի դասատու	0.42	90000
8	1	Երաժշտության դասատու	0.42	90000
9	2	Բուժքույր	1	77000
10	1	Գործավար	0.5	77000
11	1	Պահակ	1	74000
Ընդամենը՝			*13.09*	

ՀԱՎԵԼՎԱԾ 6
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-ի N 9 ՆԻՍՏԻ
N 36-Ն ՈՐՈՇՄԱՆ

1. Մրգաշատի երաժշտական դպրոցի աշխատակիցների քանակը,հաստիքացուցակն և պաշտոնային դրույքաչափերը.
   1) Աշխատակիցների քանակը - 14
   2) Աշխատակազմի հաստիքացուցակ և պաշտոնային դրույքաչափեր՝

Աղյուսակ 6

ՀՀ	*Քանակ*	*Հաստիքի անվանումը*	*Դրույքը*	*Պաշտոնի դրույքաչափը*
1	*2*	*3*	*4*	*5*
1	1	Տնօրեն	1	110000
2	1	Գործավար	0.5	77000
3	1	Հաշվապահ	0.5	82000
4	1	Տնտեսվար	0.5	77000
5	9	Դասատու	10	80000
6	1	Հավաքարար	1	74000
Ընդամենը՝			*13.5*	

ՀԱՎԵԼՎԱԾ 7
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-ի N 9 ՆԻՍՏԻ
N 36-Ն ՈՐՈՇՄԱՆ

1 Մրգաշատի ԲԱ ՀՈԱԿ-ի աշխատակիցների քանակը,հաստիքացուցակն և պաշտոնային դրույքաչափերը.
2 Աշխատակիցների քանակը - 11
3 Աշխատակազմի հաստիքացուցակ և պաշտոնային դրույքաչափեր՝

Աղյուսակ 7

ՀՀ	*Քանակ*	*Հաստիքի անվանումը*	*Դրույքը*	*Պաշտոնի դրույքաչափը*
1	*2*	*3*	*4*	*5*
1	1	Գործադիր տնօրեն	1	115000
2	1	Հաշվապահ	1	118000
3	1	Ընտ. բժիշկ	1	309900
4	1	Ընտ. բժիշկ	1	220691
5	2	Ընտ. բուժքույր	2	110700
6	2	Բուժքույր	2	84154
7	1	Բուժքույր լաբորանտ	0.25	140400
8	2	Համակարգչի օպերատոր	1.75	90290
9	1	Հավաքարար	1	75000
Ընդամենը՝			*11*	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«06» Դեկտեմբերի 2018 թ. *N 37-Ն*

2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Համնրապետության Արմավիրի մարզի Մրգաշատ համայնքի 2019 թվականի բյուջեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կողմ-	*Դեմ-*	*Ձեռնպահ-*
Վ.Հակոբյան ---------- /ստ./		
Ռ.Մովսիսյան ---------- / ստ./		
Թ.Սողոմոնյան ---------- / ստ./		
Ի.Հակոբյան ---------- / ստ./		
Գ.Համբարձումյան ---------- /ստ./		
Վ. Վարդանյան ---------- / ստ./		
Ն, Կյուրեղյան ---------- / ստ./		
Մ, Մարգսյան ---------- / ստ./		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ*

Կ. Տ.

2018 թվականի
Դեկտեմբերի «06»
գ. Մրգաշատ